
Luys Lույս®
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2026Թ. ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....5
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....8
   3.1. Բյուջեի ծախսերը՝ ծրագրային դասակարգմամբ.....10
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ.....14
5. ԱՄՓՈՓՈՒՄ.....17

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱԲ	ՀՀ աշխատանքի և բարեկեցության նախարարություն
ԲՏԱԱԲ	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և արհեստական բանականության նախարարություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԷՆ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
ԿԲ	ՀՀ կենտրոնական բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԿԳՄՍ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՊՆ	ՀՀ պաշտպանության նախարարություն
ՇՄ	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏԿԵ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2026թ. համաշխարհային տնտեսության արտաքին միջավայրը շարունակում է բնութագրվել զգալի անորոշությամբ՝ չնայած ռուս-ուկրաինական և այլ հակամարտությունների, մատակարարման շղթաների խաթարումների և դրանցով պայմանավորված տնտեսական ցնցումների ազդեցության աստիճանական նվազմանը:

Հայաստանի Հանրապետության հիմնական գործընկեր երկրները 2026թ. ինն ամիսներին տնտեսական աճի տեմպի առումով միմյանցից զգալիորեն տարբերվել են. ԱՄՆ-ում և Չինաստանում արձանագրվել են համեմատաբար բարձր աճի տեմպեր, մինչդեռ Եվրագոտում և ՌԴ-ում տնտեսական ակտիվությունն ավելի զուսպ է եղել: Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ ԱՄՆ տնտեսության միջին աճը կազմել է 2.3%, Չինաստանինը՝ 4.6%, Եվրագոտու տնտեսությանը՝ 1%, ՌԴ-ինը՝ 0.6%:

ՀՀ տնտեսությունն արտաքին աշխարհաքաղաքական անորոշություններից բացի իր վրա կրում է նաև ռուս-ուկրաինական հակամարտության արտածին բարենպաստ ներգործության զգալի չեզոքացման և ՌԴ-ի կողմից կիրառվող սահմանափակումների պատճառով մի շարք ապրանքատեսակների գծով ավանդական ուղղություններով արտահանման էական կրճատման/դադարեցման բացասական ազդեցությունը:

2026թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ-ում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական ակտիվությունն աճել է 6.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների, շինարարության և արդյունաբերության ոլորտներում արձանագրված աճով:

Արդյունաբերության ոլորտում տարեսկզբին արձանագրված աճի բարձր տեմպերն աստիճանաբար դանդաղել են: 2026թ. հունվար-սեպտեմբերին ճյուղի թողարկումն աճել է 5.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորվել է հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման (մետաղական հանքաքարի արդյունահանում), ինչպես նաև մշակող արդյունաբերության աճով. դրանց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.8 և 2.2 տոկոսային կետ: Միաժամանակ, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ենթաճյուղի նվազումը բացասաբար է ազդել ճյուղի ընդհանուր աճի վրա՝ դրան հակազդելով 0.3 տոկոսային կետով:

2026թ. հունվար-սեպտեմբերին *Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության* համախառն արտադրանքը նվազել է 4.2%-ով՝ հիմնականում պայմանավորված բուսաբուծության և անասնաբուծության ծավալների նվազմամբ, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.0 և 0.5 տոկոսային կետ:

Շինարարության ոլորտում արձանագրված 24.9% աճը հիմնականում պայմանավորված է եղել կազմակերպությունների, բնակչության, համայնքների և պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարության ծավալների ավելացմամբ, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 14.7, 5.8, 2.6 և 1.6 տոկոսային կետ:

Ծառայությունների ոլորտում թողարկման 13.0% աճին հիմնականում նպաստել են ֆինանսական և ապահովագրական գործունեության, տեղեկատվության և կապի, տրանսպորտի, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման ենթաճյուղերը՝ համապատասխանաբար՝ 4.2, 3.0, 2.2 և 1.4 տոկոսային կետով:

***Առևտրի ոլորտի* աճն էապես դանդաղել է՝ կազմելով ընդամենը 0.6%:** Աճը հիմնականում ապահովվել է մանրածախ առևտրի հաշվին, որի նպաստումը կազմել է 2.1 տոկոսային կետ, մինչդեռ մեծածախ առևտրի նվազումը՝ 1.9 տոկոսային կետ բացասական նպաստմամբ, հակազդել է ընդհանուր աճին: **Մեծածախ առևտրի նվազումը մտահոգիչ ազդակ է, քանի որ կարող է վկայել գործարար ակտիվության թուլացման և գործարար միջավայրի վատթարացման միտումների մասին:**

Հունվար-սեպտեմբերին *սպառման* իրական ծավալն աճել է շուրջ 5.1%-ով՝ հիմնականում մասնավոր հատվածի սպառման աճի հաշվին:

Կապիտալ ներդրումների ծավալը հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է շուրջ 15.8%-ով՝ հիմնականում մասնավոր ներդրումների ավելացման հաշվին: Մասնավոր ներդրումների աճը զգալի չափով պայմանավորված է շինարարության և հիպոթեքային վարկավորման ծավալների ավելացմամբ: Միաժամանակ, պետական ներդրումների նվազումը բացասաբար է անդրադարձել ընդհանուր ներդրումների աճի վրա:

2026թ. հունվար-սեպտեմբերին *արտաքին ապրանքաշրջանառությունը* նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.7%-ով և կազմել 14,953 մլն ԱՄՆ դոլար: **Աճը պայմանավորվել է ներմուծման ծավալների ավելացմամբ, մինչդեռ արտահանումը նվազել է:**

2026թ. ինն ամիսներին արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վատթարացել է 39.0%-ով՝ հասնելով 4,627 մլն ԱՄՆ դոլարի:

2026թ. հունվար-սեպտեմբերին ապրանքների արտահանումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 8.0%-ով: Արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է վերաարտահանման ծավալների կրճատմամբ (թանկարժեք մետաղների գծով) և հայկական ծագման որոշ ապրանքատեսակների (բուսական ծագման, պատրաստի սննդի, կենդանական ծագման արտադրանքի գծով) արտահանման վրա ՌԴ-ի կողմից կիրառվող սահմանափակումներով: Միաժամանակ, ընթացիկ տարվա ինն ամիսներին հանքահումքային ապրանքատեսակների արտահանման մասով արձանագրվել է բարձր աճ՝ հակազդելով արտահանման նվազմանը: Ի դեպ, այդ աճի զգալի մասը պարզապես պայմանավորված է գների գործոնով՝ միջազգային գների բարձրացմամբ:

2026թ. հունվար-սեպտեմբերին ապրանքների ներմուծումը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 9.5%-ով: Ներմուծման իրական ծավալները նվազել են՝ շուրջ 4.1%-ով (վերաարտահանման կրճատման շնորհիվ), իսկ ներմուծվող ապրանքների գներն աճել են՝ 9.1%-ով:

2026թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 30.5%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, որից 28.8 տոկոսային կետը՝ ԵԱՏՄ երկրներին, 17.9%-ը՝ ԵՄ երկրներին, իսկ 51.6%-ը՝ այլ երկրների (որից 17.2 տոկոսային կետը՝ Չինաստանին): **Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրաշրջանառության աշխարհագրական կառուցվածքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ որոշակիորեն փոխվել է.** աճել են այլ երկրների և ԵՄ երկրների կշիռները՝ համապատասխանաբար 0.7 և 5.5 տոկոսային կետով, մինչդեռ ԵԱՏՄ երկրների կշիռը 7.0 տոկոսային կետով նվազել է (ԱՊՀ երկրների կշիռը նվազել է 6.2 տոկոսային կետով): **ԵԱՏՄ և ԱՊՀ երկրների կշիռների նվազմանը հիմնականում նպաստել է ՀՀ ամենախոշոր առևտրային գործընկեր ՌԴ-ի կշռի 7.4 տոկոսային կետով կրճատումը: ՌԴ-ի հետ արտաքին առևտրաշրջանառությունը 2026թ. հունվար-սեպտեմբերին նվազել է 19.4%-ով:**

2026թ. հունվար-սեպտեմբերին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 5.8%-ով՝ կազմելով 312,079 դրամ: **4.5% գնաճի պայմաններում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ իրական աշխատավարձի աճը կազմում**

է 1.2%: Այսինքն՝ իրական աշխատավարձի աճի տեմպը մի քանի անգամ ցածր է տնտեսական ակտիվության աճի տեմպից: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 9.2%-ով և կազմել 248,850 դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 4.6%-ով՝ կազմելով 335,792 դրամ:

2026թ. հունվար-սեպտեմբերին գնաճային միջավայրը բնութագրվել է գնաճի արագացմամբ՝ ԿԲ-ի թիրախից բարձր մակարդակում: Սեպտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է 4.3%, իսկ միջին գնաճը՝ 4.5%: Միաժամանակ, 12-ամսյա բնականոն գնաճը, որը չի ներառում սեզոնային տատանողական ապրանքներն ու վարչարարորեն կարգավորվող ծառայությունները, կազմել է 4.7%: Այս պայմաններում ԿԲ-ն մինչև սեպտեմբեր անփոփոխ է պահել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, իսկ սեպտեմբերին այն բարձրացրել է 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 6.75%:

2026թ. հունվար-սեպտեմբերին դեպի ՀՀ ֆիզիկական անձանց փոխանցումների զուտ ներհոսքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զգալիորեն աճել է: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ՀՀ մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային ու ոչ առևտրային նպատակներով փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է 2,208 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 2.2 անգամ: ՌԴ-ից զուտ փոխանցումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են շուրջ 56.4%-ով: Միևնույն ժամանակ, այլ երկրներ փոխանցումների մասով 2022թ. երկրորդ կիսամյակից ձևավորված միտումը պահպանվել է. այս երկրներ փոխանցումների արտահոսքը շարունակում է գերազանցել ներհոսքին:

Այսպիսով, 2026թ. ինն ամիսների մակրոտնտեսական զարգացումների համատեքստում, տնտեսական ակտիվության բարձր աճի մասին հիշատակելիս, չի կարելի նկատի չունենալ արտաքին ու ներքին մի շարք ռիսկեր: Մասնավորապես, տնտեսական աճի շարժիչները եղել են հիմնականում այնպիսի «ոչ արտահանելի» ճյուղեր, ինչպիսիք են ծառայությունները և շինարարությունը: Արտաքին առևտրի հաշվեկշռի վատթարացումը, արտահանման նվազումը, գնաճային ճնշումների ուժեղացումը և որոշ ոլորտներում ակտիվության թուլացումը շարունակում են սահմանափակել աճի կայունության հնարավորությունները: Մինչդեռ կայուն և շարունակական բարձր տնտեսական աճը մեծապես կախված է «արտահանելի» ճյուղերի՝ աճ «գեներացնելու» կարողությունից:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ պետական բյուջեի եկամուտները 2026 թվականի ինն ամիսների ընթացքում կազմել են 2,431.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 14.4%-ով կամ 305.7 մլրդ դրամով ավելի:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2025թ.	2026թ.			
	Ինն ամիսների փաստացի	Ինն ամիսների պլան	Ինն ամիսների ճշտված պլան	Ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, *այդ թվում՝*	**2,125.5**	**2,265.2**	**2,331.9**	**2,431.2**	**104.3**
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	*2,012.8*	*2,181.3*	*2,218.8*	*2,308.2*	*104.0*
Պաշտոնական դրամաշնորհներ	*5.0*	*13.2*	*31.5*	*22.3*	*70.9*
Այլ եկամուտներ	*107.7*	*70.7*	*81.7*	*100.7*	*123.2*

Պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և պետական տուրքերը 2026թ. ինն ամիսներին կազմել են 2,308 մլրդ դրամ՝ իննամսյա ծրագրային ցուցանիշից 4.0%-ով ավելի:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2025թ. ինն ամիսների փաստացի (մլրդ դրամ)	2026թ. ինն ամիսների փաստացի (մլրդ դրամ)	2026թ. ինն ամիսները 2025թ. ինն ամիսների նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	**2,012.8**	**2,308.2**	**114.7**
1. Հարկային եկամուտներ, *այդ թվում՝*	**1,946.9**	**2,217.6**	**113.9**
ԱԱՀ	*652.6*	*733.4*	*112.4*
Ակցիզային հարկ	*109.0*	*124.2*	*114.0*
Շահութահարկ	*344.0*	*386.6*	*112.4*
Մաքսատուրք	*54.9*	*55.3*	*100.6*
Եկամտային հարկ	*535.7*	*602.5*	*112.5*
Շրջանառության հարկ	*56.4*	*65.5*	*116.0*
Սոցիալական վճար (կուտակային կենսաթոշակի գծով)	*86.9*	*99.0*	*113.9*
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	*49.4*	*80.1*	*162.2*

Այլ հարկեր	*57.9*	*71.0*	*122.5*
2. Պետական տուրք	**66.0**	**90.6**	**137.3**

Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության աճին ամենամեծ նպաստումն ունեցող եկամտատեսակներն են *ԱԱՀ-ն* (նպաստումը՝ 4.0 տոկոսային կետ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը՝ 12.4%), *եկամտային հարկը* (նպաստումը՝ 3.3 տոկոսային կետ, աճը՝ 12.5%) և *շահութահարկը* (նպաստումը՝ 2.1 տոկոսային կետ, աճը՝ 12.4%):

2026թ. ինն ամիսներին պետական բյուջե մուտքագրված *պետական տուրքերը* կազմել են 90.6 մլրդ դրամ՝ իննամսյա ծրագրային ցուցանիշից 46.4%-ով ավելի, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ պետական տուրքերում 59.1% տեսակարար կշիռ ունեցող լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի փաստացի մեծությունը 71.1%-ով (22.3 մլրդ դրամով) գերազանցել է իննամսյա ծրագրային ցուցանիշը:

Չնայած նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցված աճին՝ *պաշտոնական դրամաշնորհների* գծով մուտքերը հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի համեմատ թերակատարվել են: 2026 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ստացվել են 22.3 մլրդ դրամ *պաշտոնական դրամաշնորհներ*՝ կազմելով ինն ամիսների ծրագրված մուտքերի 70.9%-ը: Նշված գումարից 3.8 մլրդ դրամը ստացվել է արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի շրջանակներում, մնացած 18.5 մլրդ դրամը տրամադրվել է բյուջետային աջակցության շրջանակներում: **Պաշտոնական դրամաշնորհների գծով թերակատարումը պայմանավորված է նպատակային դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով:** Դրանցից 2-ի գծով նախատեսված 1.8 մլրդ դրամ դրամաշնորհները չեն ստացվել, 12-ի գծով միջոցները ստացվել են մասնակիորեն՝ 33.4%-ով, և միայն մեկ նպատակային ծրագիր ճշտված պլանի համեմատ չի թերակատարվել: Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե մուտքագրված պաշտոնական դրամաշնորհների՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 4.5 անգամ կամ 17.3 մլրդ դրամով գերազանցելը պայմանավորված է այդ ժամանակահատվածում ԵՄ-ի կողմից տրամադրված բյուջետային աջակցության դրամաշնորհների զգալի ավելացմամբ:

2026թ. ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեի *այլ եկամուտները* կազմել են 100.7 մլրդ դրամ՝ 23.2%-ով գերազանցելով իննամսյա ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 6.5%-ով կամ 7.0 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված օրենքով և

իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, ինչպես նաև ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց ստացվող տոկոսավճարների նվազմամբ:

Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից հաշվետու ժամանակահատվածում ստացվել են ավելի քան 18.8 մլրդ դրամի շահաբաժիններ, որոնք 32.2%-ով (4.6 մլրդ դրամով) գերազանցել են իննամսյա ծրագրային ցուցանիշը և 3.8%-ով (689.4 մլն դրամով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Մուտքերը հիմնականում ապահովվել են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում, «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ում և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ում պետական մասնակցության դիմաց ստացված շահաբաժինների հաշվին, որոնք կազմել են համապատասխանաբար 11.8 մլրդ դրամ, 2.0 մլրդ դրամ և 1.9 մլրդ դրամ:

2026 թվականի իննամսյակի ընթացքում իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացված մուտքերը 13.1%-ով (2.6 մլրդ դրամով) գերազանցել են իննամսյա ծրագրային ցուցանիշը և 5.9%-ով (1.2 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից հաշվետու ժամանակահատվածում ստացվել են 24.8 մլրդ դրամ տոկոսավճարներ, որոնք 36.5%-ով (6.6 մլրդ դրամով) գերազանցել են իննամսյա ծրագրային ցուցանիշը, սակայն 17%-ով (5.1 մլրդ դրամով) զիջել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: **Ծրագրված ցուցանիշի գերազանցումը հիմնականում պայմանավորված է պետական բյուջեի մուտքերի համեմատ ելքերի ավելի ցածր կատարողականով, որի պայմաններում առաջացել են լրացուցիչ ժամանակավոր ազատ դրամական միջոցներ:**

2026թ. իննամսյակին պետական բյուջեի եկամուտների ընդհանուր աճը և ճշտված ծրագրի նկատմամբ բարձր կատարողականը դեռևս բավարար հիմք չեն հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը դրական գնահատելու համար: Բյուջեի եկամուտների կատարման արդյունավետությունը գնահատելիս պարտադիր պետք է հաշվի առնել ոչ միայն դրանց ընդհանուր աճն ու պլանային ցուցանիշների կատարումը, այլև եկամուտների կառուցվածքը, կայունությունը և այդ եկամուտներով ձևավորված ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Պետական բյուջեի ծախսերը 2026 թվականի ինն ամիսներին կազմել են 2,403.3 մլրդ դրամ՝ ճշտված պլանի ցուցանիշից 14.4%-ով կամ 403.1 մլրդ դրամով պակաս: Ընդհանուր ծախսերի թերակատարումը զգալի չափով պայմանավորված է «տնտեսական հարաբերություններ», «պաշտպանություն», և «սոցիալական պաշտպանություն» բաժինների գծով արձանագրված ցածր կատարողականով: Դրանց գծով թերակատարումը կազմել է համապատասխանաբար 93.3 մլրդ դրամ, 82.2 մլրդ դրամ և 64.1 մլրդ դրամ:

Թերակատարվել են և՛ ընթացիկ, և՛ կապիտալ ծախսերը. ընթացիկ ծախսերի գծով թերակատարումը 7.5% է, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների (դրանք հիմնականում կապիտալ ծախսերն են) մասով թերակատարումը՝ 41.8%: Ընդհանուր թերակատարման 41.6%-ն ընթացիկ ծախսերի մաս է կազմում, իսկ 58.4%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների:

Պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 99.1%-ը կամ 2,383 մլրդ դրամը, որոնց ինն ամիսների ծրագիրը կատարվել է 87.1%-ով: Բյուջեի ծախսերի 0.9%-ը՝ 20.7 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, ինչը կազմել է ինն ամիսների ծրագրի 29.1%-ը:

Այս անգամ ևս (ինչպես նախորդ տարվա նույն ժամանակահատվածում) ճշտված պլանի նկատմամբ թերակատարումը վերաբերում է ընթացիկ ծախսերի՝ տնտեսագիտական դասակարգմամբ առանձնացվող բոլոր բաղադրիչներին:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2025թ.	2026թ.			
	ինն ամիսների փաստացի	ինն ամիսների պլան	ինն ամիսների ճշտված պլան	ինն ամիսների փաստացի	Կատարո-ղականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	**2,205.4**	**2,706.2**	**2,806.4**	**2,403.3**	**85.6**
Ընթացիկ ծախսեր, *այդ թվում՝*	**1,766.9**	**2,155.3**	**2,243.2**	**2,075.6**	**92.5**
Աշխատանքի վարձատրություն	*173.9*	*194.8*	*207.1*	*196.3*	*94.8*
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	*64.5*	*86.7*	*103.0*	*79.1*	*76.8*
Տոկոսավճարներ	*211.8*	*252.7*	*230.4*	*222.8*	*96.7*

Սուբսիդիաներ	*145.0*	*177.4*	*191.1*	*180.5*	*94.4*
Դրամաշնորհներ	*206.2*	*236.7*	*225.4*	*206.4*	*91.6*
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	*793.0*	*979.5*	*1,087.3*	*1,013.1*	*93.2*
Այլ ծախսեր	*172.5*	*227.3*	*198.8*	*177.4*	*89.2*
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	**438.6**	**550.9**	**563.2**	**327.8**	**58.2**
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր), *այդ թվում՝*	**441.1**	**558.4**	**570.7**	**336.1**	**58.9**
Շենքեր և շինություններ	*419.9*	*517.3*	*517.7*	*312.2*	*60.3*
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	*17.7*	*27.7*	*39.5*	*20.9*	*52.8*
Այլ հիմնական միջոցներ	*3.5*	*13.4*	*13.4*	*3.0*	*22.3*
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	**(2.5)**	**(7.5)**	**(7.5)**	**(8.3)**	**110.4**

Թերակատարումը շատ ավելի զգալի է կապիտալ ծախսերի[1] գծով: Այն ավելացել է թե՛ բացարձակ մեծությամբ և թե՛ ճշտված պլանի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրանց ծավալը նվազել է 105.0 մլրդ դրամով (23.8%-ով), իսկ տոկոսային արտահայտությամբ կատարողականը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 71.9%-ից վատթարանալով հասել է 58.9%-ի:

Կապիտալ ծախսերի գծով թերակատարումը հիմնականում պայմանավորված է «ՀՀ պաշտպանության ապահովում», «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» և «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրերի շրջանակներում իրականացված կապիտալ ծախսերի ցածր կատարողականներով՝ համապատասխանաբար՝ 72.3% (179 մլրդ դրամ), 69.8% (83.2 մլրդ դրամ) և 32.7% (27.5 մլրդ դրամ):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի կապիտալ ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի շրջանակներում կատարված կապիտալ ծախսերի՝ 39.9%-ով (118.6 մլրդ դրամով) և «Ճանապարհային ցանցի բարելավում»

[1] Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի տարբերությունը:

ծրագրի շրջանակներում կատարված կապիտալ ծախսերի 35.4%-ով (15.0 մլրդ դրամով) նվազմամբ:

Արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, այդ թվում՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ նախատեսված ծրագրերի գծով, արձանագրվել է էական թերակատարում՝ 65.3% կամ 57.2 մլրդ դրամ: Ներքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծրագրերի կապիտալ ծախսերի թերակատարումը դրամական արտահայտությամբ ավելի մեծ է եղել՝ 177.5 մլրդ դրամ (ճշտված պլանի ցուցանիշի 36.7%-ը): Միևնույն ժամանակ, եթե ներքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծրագրերի թվում հաշվի չառնվեն ՀՀ պաշտպանության նախարարության ծրագրերը (կատարողականը՝ 72.2%), մնացած ծրագրերի կատարողականը զգալիորեն ավելի ցածր է՝ ընդամենը 53.8%:

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են 8.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 2.5 մլրդ դրամի և կանխատեսված 7.5 մլրդ դրամի դիմաց:

Տոկոսային արտահայտությամբ կապիտալ ծախսերի թերակատարումն էապես՝ շուրջ 5.5 անգամ, գերազանցում է ընթացիկ ծախսերի թերակատարմանը, իսկ դա նշանակում է, որ տնտեսության վրա բյուջետային ծախսերի թերակատարման բացասական ազդեցությունն իրականում շատ ավելի մեծ է, քան կարող է թվալ՝ դատելով ընդհանուր ծախսերի թերակատարումից: Բանն այն է, որ կապիտալ ծախսերին հատուկ է ոչ միայն բոլոր տեսակի պետական ծախսերին բնորոշ բազմարկման (մուլտիպլիկատիվ) էֆեկտը, այլև այն, որ պետությունն առաջին հերթին հենց կապիտալ ծախսերով պետք է ավելացնի տնտեսական աճի պոտենցիալը:

3.1. Բյուջեի ծախսերը՝ ծրագրային դասակարգմամբ

ՀՀ 2026թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրով ինն ամիսների համար նախատեսվել էր 170 բյուջետային ծրագրի իրականացում, իսկ ճշտված ծրագրով դրանց թիվը կազմել է 174: Ծրագրերն իրականացվել են 48 պետական մարմինների և ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի միջոցներ են օգտագործվել 169 ծրագրի շրջանակներում: Միաժամանակ, ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 3 ծրագրերի համար հատկացված միջոցները, ըստ անհրաժեշտության, վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին: Ծրագրերի շրջանակներում ինն ամիսներին նախատեսված 941 միջոցառումներից (չհաշված ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 5 միջոցառումները) ամբողջությամբ կամ մասնակիորեն իրականացվել է 850-ը կամ 90.3%-ը:

2026թ. ինն ամիսների պետական բյուջեի կատարման արդյունքները ցույց են տալիս, որ հաշվետվությունում ներկայացված բոլոր պետական մարմիններն էլ ունեն թերակատարված ծրագրեր: Ընդ որում, մի շարք մարմինների գծով արձանագրված թերակատարումներն առանձնապես մեծ են եղել. այսպես, ԲՏԱԱԲ նախարարության ծրագրերի ընդհանուր թերակատարումը կազմել է 59.3%, ՏԿԵ նախարարության մասով՝ 37.3%, ՇՄ նախարարության մասով՝ 25.2%, ՊՆ մասով՝ 18.8%, իսկ ԿԳՄՍ նախարարության մասով՝ 18.3%:

Ինչպես նշվել է, 2026թ. առաջին ինն ամիսների ընթացքում պետական բյուջեի ծախսերի փաստացի կատարումը նախատեսված մակարդակից ցածր է եղել 403.1 մլրդ դրամով: Այդ շեղման զգալի մասը բաժին է ընկել ՏԿԵ նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերին, որոնց գծով ծախսերի թերակատարումը կազմել է 93.3 մլրդ դրամ: Մեծ ծավալի թերակատարում է արձանագրվել նաև պաշտպանության (81.0 մլրդ դրամ), ԱԲ (64.1 մլրդ դրամ) և ԿԳՄՍ նախարարությունների ծրագրերի (63.6 մլրդ դրամ) գծով:

Ի դեպ, ՊՆ ծրագրերի գծով փաստացի ծախսերը 2026թ. ինն ամիսներին կազմել են 349.6 մլրդ դրամ՝ շուրջ 108.8 մլրդ դրամով զիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

ՊՆ պատասխանատվությամբ իրականացվող «*ՀՀ պաշտպանության ապահովում*» ծրագրի գծով արձանագրվել է պետական բյուջեի ծախսերի՝ բացարձակ մեծությամբ ամենամեծ թերակատարումը՝ 80.2 մլրդ դրամ (ճշտված պլանով ծրագրի համար նախատեսված ցուցանիշի 18.7%-ը): Ծրագրի շրջանակներում փաստացի կատարված ծախսերը կազմել են 348.1 մլրդ դրամ՝ հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսված 428.3 մլրդ դրամի դիմաց: Ծրագրին հատկացված միջոցների 51.4%-ը՝ շուրջ 179.0 մլրդ դրամը, ուղղվել է ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավմանը, որի համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 72.3%-ով: Հատկացված միջոցների 48.4%-ը՝ 168.4 մլրդ դրամ, ծախսվել է ռազմական կարիքների բավարարման նպատակով. այս ուղղությամբ կատարողականը կազմել է նախատեսվածի 93.7%-ը:

2026թ. ինն ամիսների կատարողականի արդյունքներով՝ պատասխանատու մարմինների մի շարք ծրագրերի գծով ճշտված պլանի կատարումը չի հասել 50%-ի, և այդ պատճառով դրանք դասակարգվել են որպես «անբավարար» կատարողական ունեցողներ: Աղյուսակ 4-ում ներկայացված են մի քանի նախարարությունների պատասխանատվության ներքո իրականացված «անբավարար» կատարողական ունեցող ծրագրերը:

Աղյուսակ 4. 2026թ. ինն ամիսներին «անբավարար» կատարողականով*) իրականացված որոշ ծրագրերի ծախսերը

N	Ծրագիր	Պատասխանատու	2026թ. ինն ամիսների պլան, մլն դրամ	2026թ. ինն ամիսների ճշտված պլան, մլն դրամ	2026թ. ինն ամիսների փաստացի, մլն դրամ	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
1.	Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում	**ԲՏԱԱԲ նախարարություն** *(ընդհանուր 5 ծրագիր՝ 3-ը «անբավարար» կատարողականով)*	2,696.1	2,488.8	713.9	28.7
2.	Թվային փոխակերպման գործընթացի իրականացում		6,362.1	6,640.1	2,027.4	30.5
3.	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր		16,455.6	14,890.9	6,078.3	40.8
1.	Զբոսաշրջության զարգացման ծրագիր	**Էկոնոմիկայի նախարարություն** *(ընդհանուր 11 ծրագիր՝ 2-ը «անբավարար» կատարողականով)*	2,528.7	2,528.7	396.3	15.7
2.	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում		1,966.3	1,462.3	508.2	34.8
1.	Զբաղվածության ծրագիր	**ԱԲ նախարարություն** *(ընդհանուր 17 ծրագիր՝ 1-ը «անբավարար» կատարողականով)*	8,656.8	8,166.1	2,287.5	28.0
1.	Ապահով դպրոց	**ԿԳՄՍ նախարարություն** *(ընդհանուր 24 ծրագիր՝ 2-ը «անբավարար» կատարողականով)*	539.0	544.3	106.9	19.6
2.	Ակադեմիական քաղաքի ստեղծում		3,487.2	3,487.2	830.6	23.8
1.	Կոշտ թափոնների կառավարում	**ՏԿԵ նախարարություն** *(ընդհանուր 20 ծրագիր՝ 5-ը «անբավարար» կատարողականով)*	169.2	169.2	-	0.0
2.	Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիր		2,689.3	2,462.5	94.4	3.8
3.	Ռադիոակտիվ թափոնների կառավարում		31.4	548.0	31.4	5.7
4.	Ճանապարհային ցանցի բարելավում		90,969.1	94,539.8	34,174.8	36.1
5.	Քաղաքային զարգացում		12,841.8	13,588.1	6,152.7	45.3

** Ճշտված պլանի նկատմամբ կատարողականը 50%-ից ցածր է:*

Ծրագրերի մեծ մասի դեպքում ցածր կատարողականը կրում է շարունակական բնույթ՝ պահպանվելով արդեն մի քանի հաշվետու ժամանակահատված: Խնդրի լրջությունն ավելի է ընդգծվում այն հանգամանքով, որ այդ ծրագրերի զգալի մասն ունի առանձնահատուկ ռազմավարական նշանակություն:

2026թ. առաջին ինն ամիսներին <u>ԲՏԱԱԲ նախարարության</u> պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի կատարողականն ընդամենը 40.7% է եղել. ճշտված պլանով նախատեսված 26.0 մլրդ դրամից

փաստացի ծախսվել է 10.6 մլրդ դրամ: Ընդ որում, թերակատարումը վերաբերում է նախարարության բոլոր ծրագրերին: Առավել մտահոգիչ է, որ դրանցից «անբավարար» կատարողական ունեն ՀՀ տնտեսության զարգացման առումով կարևորագույն նշանակություն ունեցող երեք ծրագրեր՝ «*Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում*», «*Թվային փոխակերպման գործընթացի իրականացում*» և «*Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացում*» ծրագրերը:

ԷՆ պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով բյուջետային միջոցների օգտագործման մակարդակը նույնպես ցածր է եղել: Մասնավորապես, 11 ծրագրերի իրականացման համար ինն ամիսներին նախատեսված 74.1 մլրդ դրամ ծախսերից թերակատարվել է 11.4 մլրդ դրամը կամ 15.4%-ը: Ընդ որում, չի թերակատարվել միայն մեկ՝ այն էլ շատ փոքր (59.3 մլն դրամ բյուջեով), ծրագիր: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ **«անբավարար» կատարողական ունեն ՀՀ տնտեսության զարգացման առումով կարևորագույն նշանակություն ունեցող այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են «*Զբոսաշրջության զարգացում*» և «*Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում*» ծրագրերը:**

ԱԲ նախարարության պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրերի (թվով 17) ընդհանուր կատարողականը համեմատաբար բարձր է, ինչը նաև պայմանավորված է նախարարության ծրագրերի բնույթով՝ դրանց մեծ մասը (օրինակ՝ «*Կենսաթոշակային ապահովություն*» ծրագիրը) պահանջում են ծախսերի լրիվ և ժամանակին իրականացում: Այնուամենայնիվ, արժի անդրադառնալ նախարարության իրականացրած ծրագրերից երկուսին՝ *Զբաղվածության* և «*Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն*» ծրագրերին: **Դրանցից առաջինի կատարողականն «անբավարար» է (ընդամենը 28.0%), իսկ երկրորդը, որի միջոցները հիմնականում օգտագործվել են «Ղարաբաղից տեղահանվածներին օժանդակելու համար աջակցություն» միջոցառման շրջանակներում, թերակատարվել է 32.7%-ով կամ 13.5 մլրդ դրամով:**

ԿԳՄՍ նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի շարքում առանձնակի ուշադրության են արժանի իշխանությունների կողմից բազմիցս թմբկահարված և հանրային խոսույթում շահարկված երկու ծրագրեր: Մասնավորապես, «*Ակադեմիական քաղաքի ստեղծում*» ծրագրի գծով 2026-ի ինն ամիսների ընթացքում թերակատարումը կազմել է 76.2%: Նույն ժամանակահատվածում «*Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում*» ծրագրի

շրջանակներում նույնպես չի ապահովվել նախատեսված ֆինանսավորման ամբողջական օգտագործումը. թերակատարումը կազմել է 30.3% կամ 36.9 մլրդ դրամ:

<u>ՏԿԵ նախարարության</u> պատասխանատվությամբ իրականացվող 20 ծրագրերից 5-ի գծով 2026թ. ինն ամիսների կատարողականն «անբավարար» է: Նախարարության ծրագրերի համար ճշտված պլանով նախատեսված 250.3 մլրդ դրամ ծախսերի փոխարեն փաստացի օգտագործվել է 157.0 մլրդ դրամ. թերակատարումը կազմել է 37.3%: **Հատկանշական է, որ նախարարության ծրագրերից թերակատարվել է անգամ իշխանությունների կողմից մշտապես որպես «հաջողության պատմություն» ներկայացվող «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագիրը՝ այն էլ 63.9%-ով:**

2026թ. առաջին ինն ամիսների ընթացքում պետական բյուջեի ծախսերի ուսումնասիրությունը վկայում է, որ նախատեսված բյուջետային միջոցների ոչ լիարժեք օգտագործման խնդիրը համատարած բնույթ է կրում: Առավել մտահոգիչ է, որ զգալի շեղումները վերաբերում են նաև տնտեսության ու երկրի զարգացման համար ռազմավարական նշանակություն ունեցող նախաձեռնությունների գծով, իսկ որոշ ծրագրերի ցածր կատարողականը պահպանվում է մի քանի հաշվետու ժամանակահատված շարունակ: Թերակատարումների համատարած ու շարունակական բնույթը հարցեր է առաջացնում ինչպես բյուջետային ծրագրերի պլանավորման իրատեսականության, այնպես էլ դրանց իրականացման ու վերահսկողության արդյունավետության վերաբերյալ:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2026 թվականի ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 27.8 մլրդ դրամ հավելուրդով՝ ծրագրված 474.4 մլրդ դրամ պակասուրդի դիմաց (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեն ունեցել է 79.9 մլրդ դրամ պակասուրդ): Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվել է թույլ խթանող:

Բյուջեի հավելուրդը պայմանավորված է եկամուտների գերակատարմամբ և ծախսերի ցածր կատարողականով, որը հանգեցրել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների աճի: Բացի այդ, չափազանց ցածր ցուցանիշ է արձանագրվել արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի գծով, որոնք կազմել են 22.3 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրի ընդամենը 9.5%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորման ներքին աղբյուրներից փոխառու միջոցներ են հանդիսացել գանձապետական պարտատոմսերը, որոնցից զուտ մուտքերը կազմել են 145.4 մլրդ դրամ՝ նախատեսված 183.1 մլրդ դրամի դիմաց:

2026թ. ինն ամիսների ընթացքում ներքին աղբյուրներից ֆինանսական զուտ ակտիվների հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է -77.4 մլրդ դրամ՝ ծրագրված 177.1 մլրդ դրամի դիմաց, ինչը հիմնականում պայմանավորված է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների՝ նախատեսված 226.5 մլրդ դրամ օգտագործման փոխարեն 98.4 մլրդ դրամ աճով:

2026թ. ինն ամիսների ընթացքում արտաքին աղբյուրներից փոխառու միջոցների հաշվին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է ԱԶԲ առողջապահության որակի բարելավման ծրագրի շրջանակներում տրամադրված 1.6 մլրդ դրամ բյուջետային աջակցության վարկի և արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի շրջանակներում ստացված վարկային միջոցների հաշվին, որոնք կազմել են 20.8 մլրդ դրամ՝ ինն ամիսների համար ծրագրված ցուցանիշից գրեթե 5 անգամ պակաս: Նպատակային ծրագրերի գծով նման մեծ թերակատարումը պայմանավորված է դրանց խիստ ցածր կատարողականով:

Աղյուսակ 5. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2025թ.	2026թ.			
	ինն ամիսների փաստացի	ինն ամիսների պլան	ինն ամիսների ճշտված պլան	ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	**79.9**	**441.1**	**474.4**	**(27.8)**	**(5.9)**
Պակասուրդի ֆինանսավորումը՝					
Ա. Ներքին աղբյուրներ, *այդ թվում՝*	**5.0**	**327.0**	**360.2**	**68.0**	**18.9**
1. Փոխառու զուտ միջոցներ	*257.2*	*183.1*	*183.1*	*145.4*	*79.4*
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	*(252.2)*	*143.9*	*177.1*	*(77.4)*	*(43.7)*
Բ. Արտաքին աղբյուրներ, *այդ թվում՝*	**74.9**	**114.4**	**114.2**	**(95.8)**	**(83.8)**
1. Փոխառու զուտ միջոցներ	*81.7*	*121.9*	*122.0*	*(86.0)*	*(70.5)*
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	*(6.8)*	*(7.8)*	*(7.8)*	*(9.8)*	*124.8*

2026թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,205.3 մլրդ դրամ կամ 14,332.6 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության պարտքը՝ 5,202.3 մլրդ դրամ կամ 14,324.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ համայնքների պարտքը՝ 3.0 մլրդ դրամ կամ 8.3 մլն ԱՄՆ դոլար: Տարեսկզբի համեմատ պետական պարտքը դրամային արտահայտությամբ նվազել է 97.9 մլրդ դրամով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ աճել 426.6 մլն ԱՄՆ դոլարով: Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ աճել է 426.7 մլն ԱՄՆ դոլարով կամ 3.1%-ով, իսկ համայնքների պարտքը՝ նվազել 0.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 0.9%-ով: ՀՀ պետական պարտքի ծավալում կառավարության պարտքի տեսակարար կշիռը կազմել է 99.9%, իսկ համայնքների պարտքինը՝ 0.1%:

Ներքին պարտքի տեսակարար կշիռը ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում աճել է՝ 2025-ի սեպտեմբերի 30-ի 51.4%-ից 2026-ի սեպտեմբերի 30-ին հասնելով 53.3%-ի: **Պարտքի կառուցվածքում ներքին պարտքի տեսակարար կշռի աճը, անկասկած, դրական է, սակայն, ինչպես բազմիցս նշվել է, կառավարությունն այս դեպքում հատկապես պետք է առանձնահատուկ զգուշավորություն ցուցաբերի, քանի որ ներքին պարտքն արտաքին պարտքի համեմատ էապես ավելի «թանկ» պարտք է: Պատահական չէ, որ տարեցտարի անշեղորեն աճում են պարտքի սպասարկման տոկոսավճարները. դրանք 2017-ի ինն ամիսների 90.6 մլրդ դրամի համեմատ աճել են շուրջ 2.5 անգամ՝ 2026-ի ինն ամիսներին կազմելով 222.8 մլրդ դրամ:**

Աղյուսակ 6. ՀՀ պետական պարտքը

	Առ 31.12.2025թ.	Առ 30.09.2026թ.	Փոփո-խու-թյուն, գումար	Փոփո-խու-թյուն, %	Տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքում, առ 30.09.2026թ. (%)
(մլրդ դրամ)					
ՀՀ պետական պարտք	**5,303.2**	**5,205.3**	**(97.9)**	**(1.8)**	**100.0**
ՀՀ կառավարության պարտք, *այդ թվում՝*	5,300.0	5,202.3	(97.7)	(1.8)	99.9
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	*2,493.8*	*2,428.6*	*(65.2)*	*(2.6)*	*46.7*
- ՀՀ կառավարության ներքին պարտք	*2,806.2*	*2,773.7*	*(32.5)*	*(1.2)*	*53.3*
ՀՀ համայնքների պարտք, *այդ թվում՝*	3.2	3.0	(0.2)	(5.7)	0.1
- ՀՀ համայնքների արտաքին պարտք	*3.1*	*2.9*	*(0.3)*	*(8.3)*	*0.1*
- ՀՀ համայնքների ներքին պարտք	*0.1*	*0.1*	*0.1*	*133.1*	*0.0*
(մլն ԱՄՆ դոլար)					
ՀՀ պետական պարտք	**13,906.0**	**14,332.6**	**426.6**	**3.1**	**100.0**
ՀՀ կառավարության պարտք, *այդ թվում՝*	13,897.6	14,324.3	426.7	3.1	99.9
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	6,539.3	6,687.0	147.8	2.3	*46.7*
- ՀՀ կառավարության ներքին պարտք	7,358.4	7,637.3	278.9	3.8	*53.3*

ՀՀ համայնքների պարտք, այդ թվում՝	8.4	8.3	(0.1)	(0.9)	0.1
- ՀՀ համայնքների արտաքին պարտք	*8.2*	*7.9*	*(0.3)*	*(3.8)*	*0.1*
- ՀՀ համայնքների ներքին պարտք	*0.2*	*0.4*	*0.2*	*144.7*	*0.0*

Պետական պարտատոմսերի շուկայում սեպտեմբերի շարժերը տարբերվել են՝ կախված մարման ժամկետից: 2026թ. սեպտեմբերին պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 6.7%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 1.2 տոկոսային կետով, իսկ նախորդ ամսվա համեմատ աճելով 0.1 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի սեպտեմբերյան թողարկումների եկամտաբերությունը կազմել է 7.3%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 1.9 տոկոսային կետով: Երկարաժամկետ պարտատոմսերի սեպտեմբերի եկամտաբերությունը կազմել է 9.3%՝ հուլիսի 8.6%-ի դիմաց:

ՀՀ կառավարության պարտքի՝ միջին կշռված տոկոսադրույքը 2026թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ նախորդ տարվա նույն ամսաթվի համեմատ գրեթե չի փոխվել և կազմում է 7.3%: Նկատի ունենալով, **որ անցած մեկ տարում շուկայում տոկոսադրույքները նվազել են, միջին կշռված տոկոսադրույքի անփոփոխ մնալը խորհելու տեղիք է տալիս: Անփոփոխ մնալու պատճառն այն է, որ անցած մեկ տարում ավելացել է ներքին և նվազել՝ արտաքին պարտքի տեսակարար կշիռը, իսկ, ինչպես նշվել էր, ներքին պարտքի տոկոսադրույքն էապես ավելի բարձր է, քան արտաքինինը** (մասնավորապես, 2026թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ արտաքին վարկերի և փոխառությունների գծով տոկոսադրույքը 3.3% է, իսկ պետական գանձապետական պարտատոմսերի գծով՝ 10.0%):

5. ԱՄՓՈՓՈՒՄ

2026թ. ինն ամիսներին ՀՀ տնտեսական ակտիվությունն աճել է 6.9%-ով: Աճի հիմնական մասը ձևավորվել է ծառայությունների և շինարարության հաշվին, որոնք հիմնականում «ոչ արտահանելի» ճյուղեր են, մինչդեռ արդյունաբերության աճի տեմպերը հետզհետե դանդաղում են, իսկ գյուղատնտեսության ոլորտում արձանագրվել է 4.2% անկում: Իրականում, կայուն և շարունակական բարձր տնտեսական աճը մեծապես կախված է «արտահանելի» ճյուղերի՝ աճ «գեներացնելու» կարողությունից: Տնտեսական ակտիվության աճի կայունության ապահովումը շարունակում է բարդանալ նաև մի շարք այլ գործոնների ազդեցությամբ. վատթարանում է արտաքին առևտրի հաշվեկշիռը, նվազում են արտահանման ծավալները, ուժեղանում՝ գնաճային ճնշումները, իրական աշխատավարձը տնտեսական ակտիվության համեմատ շատ ավելի դանդաղ է աճում, տնտեսության որոշ ոլորտներում արձանագրվում է ակտիվության թուլացում և այլն:

Արտաքին առևտրի զարգացումները նպաստավոր չեն. արտահանումը՝ նվազել, իսկ ներմուծումն աճել է: Մասնավորապես, դոլարային արտահայտությամբ՝ արտահանումը նվազել է 8.0%-ով, իսկ ներմուծումը՝ աճել 9.5%-ով: Այս զարգացումների արդյունքում արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը նախորդ տարվա համեմատ վատթարացել է 39.0%-ով:

ՀՀ խոշորագույն առևտրային գործընկերոջ՝ ՌԴ-ի հետ արտաքին առևտրի ծավալը կրճատվել է 19.4%-ով: Այս անկումը պայմանավորված է թանկարժեք մետաղների վերաարտահանման և ՌԴ-ի կողմից կիրառված սահմանափակումների հետևանքով դեպի ռուսաստանյան շուկա արտահանվող որոշ ապրանքատեսակների արտահանման ծավալների կրճատմամբ:

2026թ. առաջին ինն ամիսներին պետական բյուջեի եկամուտները կազմել են 2,431.2 մլրդ դրամ: Թեև հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով հաջողվել է ապահովել նախատեսված մուտքերը, **պաշտոնական դրամաշնորհների հավաքագրման մասով արձանագրվել է զգալի թերակատարում, որի հիմնական պատճառը նպատակային դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականն է:**

Պետական բյուջեի եկամուտների գերակատարումն ուղեկցվել է պետական ծախսերի զգալի թերակատարմամբ:

2026թ. ինն ամիսներին պետական բյուջեի ծախսերի ընդհանուր ծավալը կազմել է 2,403.3 մլրդ դրամ, սակայն ճշտված ծրագրով նախատեսված միջոցների ամբողջական օգտագործում չի ապահովվել. **թերակատարումը կազմել է 403.1 մլրդ դրամ կամ 14.4%: Ծախսերի ընդհանուր թերակատարումը հիմնականում պայմանավորվել է «Տնտեսական հարաբերություններ», «Պաշտպանություն» և «Սոցիալական պաշտպանություն» ուղղություններում արձանագրված ցածր կատարողականով:**

Ծախսերի թերակատարումն առավել խնդրահարույց է կապիտալ ծախսերի պարագայում: Թեև թերակատարում արձանագրվել է և՛ ընթացիկ, և՛ կապիտալ ծախսերի գծով, այնուամենայնիվ, կապիտալ ծախսերի թերակատարման տոկոսը շուրջ 5.5 անգամ բարձր է ընթացիկ ծախսերի նույն ցուցանիշից: Հետևաբար, բյուջետային ծախսերի թերակատարման իրական տնտեսական ազդեցությունը միայն ընթացիկ պահանջարկի կրճատմամբ չի սահմանափակվում: Կապիտալ ծախսերն ունեն երկակի նշանակություն. բացի այն, որ դրանք, որպես ընդհանուր պետական ծախսերի մաս, բազմարկման (մուլտիպլիկատիվ) մեխանիզմով խթանում են համախառն պահանջարկը, միաժամանակ այդ ծախսերի միջոցով է պետությանը հնարավորություն

ընձեռվում ընդլայնելու տնտեսության արտադրական ներուժը և բարձրացնելու տնտեսական աճի պոտենցիալը: Ուստի դրանց զգալի թերակատարումը բացասաբար է անդրադառնում նաև տնտեսության երկարաժամկետ զարգացման հնարավորությունների վրա:

Բյուջետային ծախսային ծրագրերի թերակատարումը համատարած բնույթ է կրել՝ արձանագրվելով 2026թ. ինն ամիսներին պետական բյուջեի կատարման հաշվետվությունում ներկայացված բոլոր պետական պատասխանատու մարմինների մասով:

Ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ծրագրերի ցածր կատարողականը վկայում է ոչ թե առանձին կամ պատահական թերացումների, այլ բյուջետային պլանավորման, ծրագրերի իրականացման և կառավարման արդյունավետության ավելի խորքային ու համակարգային խնդիրների մասին: Փաստորեն, բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների զգալի մասը չի վերածվում ժամանակին ակնկալվող պետական ծախսերի, ինչի հետևանքով սահմանափակվում է հարկաբյուջետային քաղաքականության ներուժը, որը միտված է խթանելու տնտեսական աճը, զարգացնելու ենթակառուցվածքները և ապահովելու պետական քաղաքականության՝ հռչակված առաջնահերթությունների իրագործումը:

2026թ. առաջին ինն ամիսների արդյունքներով՝ մի շարք բյուջետային ծրագրերի գծով օգտագործվել է նախատեսված միջոցների կեսից էլ քիչ, և այդ պատճառով դրանց կատարողականը գնահատվել է «անբավարար»: Հատկապես մտահոգիչ է, որ այդ ծրագրերի մեծ մասի ցածր կատարողականը մեկ հաշվետու ժամանակահատվածով չի սահմանափակվում, այլ պահպանվում է արդեն մի քանի ժամանակաշրջան շարունակ: Առավել ևս, որ նշված ծրագրերի զգալի մասն ունի ռազմավարական առանձնահատուկ նշանակություն: «Անբավարար» կատարողական ունեցող ծրագրերի ցանկում են «*Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում*» (ճշտված պլանի նկատմամբ կատարողականը՝ 28.7%), «*Թվային փոխակերպման գործընթացի իրականացում*» (կատարողականը՝ 30.5%), «*Ջրոսաշրջության զարգացում*» (կատարողականը՝ 15.7%), «*Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում*» (կատարողականը՝ 34.8%), «*Ակադեմիական քաղաքի ստեղծում*» (կատարողականը՝ 23.8%) և «*Ճանապարհային ցանցի բարելավում*» (կատարողականը՝ 36.1%) ծրագրերը:

Ուշագրավ է, որ, բացի «*Ճանապարհային ցանցի բարելավում*» ծրագրից, զգալիորեն թերակատարվել է գործող իշխանության «այցեքարտ» համարվող մեկ այլ ծրագիր ևս՝ «*Հանրակրթական և նախադպրոցական*

***հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում»* ծրագիրը. 2026թ. ինն ամիսների թերակատարումը կազմել է 30.3% կամ 36.9 մլրդ դրամ:**

2026թ. ինն ամիսներին պետական բյուջեն կատարվել է 27.8 մլրդ դրամ հավելուրդով, մինչդեռ նույն ժամանակահատվածի համար նախատեսված էր 474.4 մլրդ դրամ պակասուրդ: Ընդ որում, հավելուրդի ձևավորումը հիմնականում պայմանավորված է նախատեսված պետական ծախսերի ոչ ամբողջական իրականացմամբ:

2026թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ ՀՀ պետական պարտքի ընդհանուր ծավալը կազմել է 5,205.3 մլրդ դրամ կամ 14,332.6 մլն ԱՄՆ դոլար: Դրա հիմնական մասը՝ 5,202.3 մլրդ դրամը կամ 14,324.3 մլն ԱՄՆ դոլարը, բաժին է ընկել ՀՀ կառավարության պարտքին: **Ի դեպ, տարեցտարի անշեղորեն աճում են պարտքի սպասարկման տոկոսավճարները. դրանք 2017-ի ինն ամիսների 90.6 մլրդ դրամի համեմատ աճել են շուրջ 2.5 անգամ՝ 2026-ի ինն ամիսներին կազմելով 222.8 մլրդ դրամ:**

2026թ. ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության ուսումնասիրությունը վերհանում է մի կարևոր փաստ. տնտեսական ակտիվության աճն ու բյուջետային եկամուտների գերակատարումը չեն ուղեկցվել պետական ծախսերի՝ նախատեսված ծավալով իրականացմամբ և ռազմավարական ծրագրերի լիարժեք կատարմամբ: Ավելին, տնտեսական աճի կառուցվածքային խնդիրները, արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի խորացումը, գնաճային ճնշումները, կապիտալ ծախսերի անկումը և բյուջեի փաստացի հաշվեկշռի՝ ծրագրային մակարդակից էական շեղումը վկայում են, որ առկա են ոչ միայն առանձին ոլորտային, այլև պետական տնտեսական քաղաքականության իրականացման և կառավարման լուրջ համակարգային խնդիրներ: Պետության խնդիրը միայն անհրաժեշտ ֆինանսական միջոցների ձևավորմամբ չի սահմանափակվում. ոչ պակաս կարևոր է դրանց՝ ժամանակին և նպատակային օգտագործումը՝ տնտեսական աճի ներուժն ընդլայնելու, ենթակառուցվածքները զարգացնելու և ռազմավարական առաջնահերթություններն իրականացնելու նպատակով: Հենց այս ուղղությամբ էական առաջընթացի բացակայության պայմաններում տնտեսական աճի և բյուջետային եկամուտների դրական ցուցանիշները չեն կարող վերածվել կայուն ու որակական տնտեսական զարգացման:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: